Բ.ՕԲԱՄԱՆ ԸՆԴԴԵՄ Ջ.ՄԱԿՔԵՅՆԻ. ԱՐՏԱՔԻՆՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Վ.Ազլյան

Լիբերալ ինտերնացիոնալիզմի հայեցակետը և միջկուսակցական փոխհամաձայնության ձևավորումը ԱՄՆ-ում

Ներքին քաղաքական համադրույթի ազդեցությունը Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականության իրագործման վրա էական փոխակերպումների ենթարկվեց նորագույն պատմության ընթացքում: Մինչև ԱՄՆ-ի կողմից գլոբալ ռազմավարության որդեգրումը, որի հիմքում ընկած էր լինելու ստեղծվելիք աշխարհակարգի ուրվագծման և սերտման գործում ամերիկյան յուրահատուկ պատասխանատվության մասին թեզը, երկրի արտաքինքաղաքական ուղեգիծը շատ հաճախ վերածվում էր երկկուսակցական համակարգին բնորոշ մրցապայքարի պատանդի: Անշուշտ, թե՛ Դեմոկրատական, և թե՛ Հանրապետական կուսակցությունների վերնախավերը միասնական էին պետության արտաքին ռազմավարության նորմատիվ հենքի, ինչպես նաև արտաքին աշխարհում ազգային շահի ընդհանրական ընկալման հարցում: Այդուհանդերձ, մեծ տերության կարգավիճակի ստանձնումից (19-րդ դարի վերջին քառորդ) մինչև 1940-ական թթ. ամերիկյան քաղաքական էլիտան պետության արտաքին վարքագծի, դրա հիմքում ընկած հանգուցային սկզբունքների շուրջ եղած մոտեցումներում տատանվող դիրքորոշում ուներ. նախապատվությունը մերթ տրվում էր միջազգային ասպարեզում լայն համագործակցության գաղափարին, մերթ՝ ուժային կոշտ քաղաքականությանը: Նման քաղաքական կարծրատիպերի տիրապետության առավել ցայտուն օրինակներն էին Թ.Ռուզվելտի վարչակազմի կողմից որդեգրված «մեծ մահակի» քաղաքականությունը, որին հակադրվում էր վիլսոնյան ժամանակաշրջանի իդեալիստական լիբերալիզմի ոգեկոչումը՝ իբրև գործնական քաղաքականության հիմք:

Արտաքին ռազմավարության գործնական և հայեցակարգային (որոշ դեպքերում նույնիսկ գաղափարական) տրոհման ուժագծերն, ըստ կուսակցական պատկանելության, զգալի չափով ածանցվում էին նաև ներքին կուսակցական տարանջատման տրամաբանությունից: Հատկապես, երկու սկզբունքային հիմնախնդիրներ էին պարբերաբար բաժանում դեմոկրատական Հարավը հանրապետական Հյուսիսից. Միացյալ Նահանգների զինված ուժերի անհրաժեշտ թվաքանակի շուրջ ընթացող բանավեճերը և արտաքին առևտրի հետ կապված մանրամասները: Հանրապետական կուսակցության քաղաքական գերակայության ներքո գտնվող ուրբանիզացված արդյունաբերական Հյուսիսը մշտապես հակված էր հօգուտ մեծամասշտաբ բանակի պահպանմանը և պրոտեկցիոնիստական

միջոցառումների կիրառմանը՝ առաջին հերթին Եվրոպայի հետ առևտրատնտեսական հարաբերություններում:

Դեմոկրատների «բնօրրան» Հարավը, ելնելով սեփական տնտեսական ու հասարակական կացութաձևի կառուցվածքային առանձնահատկություններից (հանքարդյունաբերություն, բնական ռեսուրսների արտահանում), պնդում էր առևտրի ազատականացման ու փոքրաթիվ զինված ուժերի զարգացման անհրաժեշտության վրա:

Հիշյալ բաժանարար գծերի (որոնք հստակ արտացոլված քաղաքական-կուսակցական ուղղվածություն էին կրում) վերացման առաջին միտուներն ի հայտ եկան արդեն Ֆ. Ռուզվելտի նախագահության շրջանում՝ 1930-ական թթ. «Նոր կուրսի» քաղաքականության ժամանակներում: Նախ, Հարավի տնտեսական համակարգի արդիականցմանը զուգընթաց՝ կտրուկ աճեց Հյուսիսի շահագրգռությունը ապահովելու միջազգային համակարգի կայունությունը՝ հիմնականում կենտրոնանալով եվրոպական մայրցամաքի վրա: Երկրորդ, համազգային հասարակական-տնտեսական կառուցվածքային փոխակերպումները լուրջ նախադրյալներ ստեղծեցին Հյուսիս-Հարավ քաղաքական դաշինքի համար: Անկասկած, միջկուսակցական փոխհամաձայնության սերտման գործում նշանակալի դեր խաղաց Ֆ.Ռուզվելտը. առաջին անգամ նորագույն պատմության ընթացքում դեմոկրատները հնարավորություն ստացան հատելու պայմանական Մասոն-Դիքսոնի գիծը և ամրապնդվելու Հյուսիսում: Միջկուսակցական տարաձայնությունները ռասայական պրոբլեմների, ինչպես նաև աշխատանքային օրենսդրության շուրջ պահպանվեցին, սակայն առարկայական կոնսենսուս ձևավորվեց ընդդեմ տնտեսական ազգայնականության, ֆաշիզմի, իսկ այնուհետև՝ նաև կոմունիզմի:

Արտաքին քաղաքականության վարույթում հիշյալ աշխարհաքաղաքական ու ներքին տեղաշարժերն իրենց արտահայտությունը գտան ամերիկյան լիբերալ ինտերնացիոնալիզմի ձևավորման մեջ, որը կրում էր թե՛ բովանդակային, և թե՛ քաղաքական էություն. հայեցակարգային մի համադրույթ, որի պահպանման հիմքում ընկած էր երկկուսակցական հստակ փոխհամաձայնություն:

Զուտ ներամերիկյան զարգացման արգասիք լինելուց զատ, լիբերալ ինտերնացիոնալիզմի գործնական քաղաքականության ոլորտ մտնելը պայմնավորված էր նաև օբյեկտիվ ռազմավարական և օպերացիոնալ կարգի գործոններով: Ամերիկյան ներգրավվածության կտրուկ աճը համաշխարհային գործընթացներում առաջնահերթ էր դարձնում արտաքին քաղաքականությանը հարատև բնույթ հաղորդելու անհրաժեշտությունը՝ անկախ նրանից, թե որ կուսակցությունն է հաղթել համազգային ընտրություններում: Ակնհայտ էր, որ առանց լուրջ ինստիտուցիոնալ հենքի անհնարին կլիներ գործնականացնել երկկուսակցական կոնսենսուսի վրա հիմնված այդ համադրույթը:

Դասական անգլո-սաքսոնյան աշխարհաքաղաքական թեզը, ըստ որի ԱՄՆ-ը ամեն գնով պետք է խոչընդոտեր որևէ տերության իր տիրապետությունը հաստատել եվրասիական մայրցամաքի նկատմամբ, գերակա կոնստանտ էր ամերիկյան բոլոր

նախագահների համար և ենթադրում էր ոչ միայն ուժային լայնածավալ ներգրավում, այլև խոշորածավալ համագործակցության դաշտ դաշնակիցների հետ: Գլոբալ ազատական տնտեսակարգ ստեղծելու ու զարգացնելու շարժը պայմանավորված էր ինչպես տնտեսական, այնպես էլ աշխարհաքաղաքական հրամայականներով: Օրինակ, հետպատերազմյան Եվրոպայի համար Մարշալի պլանի հաստատման գործում հանրապետականների աջակցության ձեռքբերումը Կոնգրեսում մեծապես հաջողվեց առաջ քաշված փաստարկների շնորհիվ. դեմոկրատական վարչակազմի կողմից օգնության ցուցաբերման հիմքում ընկած էին ոչ այնքան հումանիտար, որքան աշխարհաքաղաքական նկատառումներ[2]:

Ճիշտ է, ինչպես նշում է ռուսաստանյան ամերիկագետ Վ.Սոգրինը, միջկուսակցական փոխհամաձայնության բաղադրիչների ծավալն ու բովանդակությունը անփոփոխ չէին, այլ փոխակերպվում էին ժամանակին համընթաց[3]: Այնուամենայնիվ, բազային հարցադրումների պարագայում երկու կուսակցությունների էլիտաները մշտապես հակված էին «կենտրոնամետ» դիրքորոշման, որը չէր վտանգի ազգային գլխավոր շահերը:

Որակական տարբերությունները երկու կուսակցությունների միջև արտաքին հիմնախնդիրների պարագայում անշուշտ պահպանվեցին՝ արտացոլելով ամերիկյան հասարակական-քաղաքական և տնտեսական զարգացման բարդ ու համալիր բնույթը: Սակայն լիբերալ ինտերնացիոնալիզմի անկյունաքարային դրույթները մնացին անսասան: Երկբևեռ աշխարհակարգի պայմաններում արտաքին ռազմավարության գերակա շարժառիթներն ու սկզբունքները հենվում էին լայն կոնսենսուսի վրա (ԽՍՀՄ-ի «զսպումը» (Հ.Թրումեն, Դ.Աչեսոն - դեմոկրատական վարչակազմ), «կոմունիզմի զսպումն ու հետ շպրտումը», «հավասարակշռումը պատերազմի եզրին»[4] (Դ.Էյզենհաուեր, Ջ.Ֆ.Դալլես - հանրապետական վարչակազմ), «ազատ աշխարհակարգի պաշտպանությունը» (Ջ.Քենեդի - դեմոկրատական վարչակազմ) և այլն)[5]:

Ընդ որում, հատկանշական էր, որ թե՛ դեմոկրատական, թե՛ հանրապետական գործադիր համակարգերում յուրահատուկ հակակշիռների սխեմա էր գործում, որը բովանդակային առումով ինչ-որ տեղ կրկնօրինակում էր միջկուսակցական փոխհամաձայնության տրամաբանությունը՝ միակողմանի ուժային ճնշման միջոցների կիրառումը պարտադիր ձևով միահյուսել ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության նորմատիվ-արժեքային օրակարգի հետ, որն, ի թիվս այլոց, ենթադրում էր բազմակողմանի ձևաչափերի խթանում ու դաշնակիցների հետ ինստիտուցիոնալ

[2] D.Yergin, Shattered Peace: The Origins of the Cold War and the National Security State, Boston, 1977, pp.326-329.
[3] В.Согрин, Политическая история США, М. “Весь Мир” 2001, стр.288-289.
[4] И.Усачев, *Джон Фостер Даллес: политический миф и реальность*, М.”Мысль” 1990, стр.211-241.
[5] Ճիշտ է, վիետնամական պատերազմի տարիներին երկկուսակցական փոխհամաձայնությունը ենթարկվեց լուրջ փորձության, սակայն ավելի ուշ այն վերականգնվեց՝ գլխավորապես պայմանավորված լինելով ԽՍՀՄ-ի շարունակական զսպման անհրաժեշտությամբ:

համագործակցության զարգացում[6]: Այլ խոսքերով, ամերիկյան քաղաքական իսթեբլիշմենտի կողմից ընդունված «կենտրոնամետ» արտաքին ուղեգիծը, որոշ իմաստով, ձեռք էր բերել կառուցվածքային էություն:

Միջկուսակցական փոխհամաձայնության ջլատումը Սառը պատերազմի ավարտից հետո

Պարադոքսալ է, սակայն կորեական և վիետնամական ծանրագույն ճգնամաժամեր վերապրած և իր հարատևությունը բազմաթիվ պարագաներում ապացուցած երկկուսակցական լիբերալ-ինտերնացիոնալիստական փոխհամաձայնության տրոհման առաջին միտումներն ի հայտ եկան 1991թ.՝ Ջ.Բուշ-ավագի հանրապետական վարչակազմի կողմից Ծոցում վարած հաղթական պատերազմի ժամանակներից ի վեր: Թեև պատերազմի վարույթն (դաշնակից պետությունների լայն կոալիցիայի ստեղծում, միջազգային աջակցություն) ու հանրային աջակցության աստիճանը (կողմ արտահայտվեցին ամերիկյան բնակչության մոտ 70%) ակնհայտորեն տեղավորվում էին նախկինում մշակված արտաքինքաղաքական համադրույթի շրջանակում, ռազմական գործողություններ սկսելու համար Սենատի հաստատումը ձեռք բերվեց չափազանց նվազ գերակշռությամբ (52 ընդդեմ 47): Հատկանշական փաստ է. սենատորները քվեարկում էին ըստ կուսակցական պատկանելության՝ ակներև դարձնելով այն անխուսափելի իրողությունը, որ սառըպատերազմյան կուսակցական համերաշխությունը վերածվում է անցյալի »յուրօրինակ մի ժառանգության»[7]:

Հանրապետական-դեմոկրատական ընդհանուր արտաքինքաղաքական «պլատֆորմի» կազմալուծման միտումը շարունակեց խորանալ նաև Բ.Քլինթոնի նախագահության օրոք: 1993թ.՝ առաջին իսկ լուրջ անհաջողությունից հետո, ամերիկյան զորքերը դուրս բերվեցին Սոմալիից, իսկ 1999թ. Կոսովոյի ճգնաժամի ժամանակ Բ.Քլինթոնը մեծ դժկամությամբ համաձայնեց ռազմական ուժի կիրառմանը՝ հիմնական շեշտը դնելով օդային հարվածների վրա[8]: 1994թ., երբ Կոնգրեսի երկու պալատներում հանրապետականները մեծամասնություն ստացան, միջկուսակցական հակասությունները էլ ավելի սրվեցին՝ ըստ էության վերաճելով սկզբունքային տարաձայնությունների: Անհամաձայնության գլխավոր հայեցակետը հանգում էր նրան, որ դեմոկրատների հակվածությունը՝ համադրել ամերիկյան հզորությունը միջազգային ինստիտուցիոնալ ձևաչափերի շրջանակներում, ըստ հանրապետականների, հարվածի տակ էր դնում ԱՄՆ-ի ինքնիշխանությունը (Կիոտոյի արձանագրություն, Միջազգային դատարանի կարգավիճակը, Միջուկային փորձարկումների համընդհանուր արգելում):

[6] Р.Ф.Иванов, *Дуайт Эйзенхауэр*, М.”Мысль” 1983, стр. 203-214.
[7] T.Daschle, The Water’s Edge, *Foreign Policy*, N103 (Summer 1996), pp.4-6.
[8] А.Уткин, *Американская стратегия для XXI-го века*, М., Логос 2000, стр. 259-266.

Այդուհանդերձ, «հավասարակշռված» արտաքին քաղաքականության միջկուսակցական փոխհամաձայնությանն առավել հզոր հարված հասցվեց Ջ.Բուշ Կրտսերի հանրապետական նախագահության շրջանում: Եթե Բ.Քլինթոնը ձգտում էր որոշակիորեն համահավասարեցնել արտաքին ռազմավարության երկու գործառույթային ուղղությունները՝ գործնականում, սակայն, շեշտադրելով բազմակողմանի ջանքերի կարևորությունը, ապա հանրապետական վարչակազմը, մասնավորապես 2001թ.-ից հետո, կտրուկ շրջադարձ կատարեց դեպի միակողմանի ուժային միջոցներ: Ուժի կիրառման և համագործակցության սկզբունքների միջև տարիների ընթացքում սերտված բանական հավասարակշռությունը, որի հենքում ընկած էր նաև ներքին համաձայնության նախադրյալը, նոր աշխարհաքաղաքական համատեքստում էապես վերաձևակերպվեց: Նեոպահպանողականների ազդեցության ժամանակավոր վերելքը ԱՄՆ-ի գործադիր իշխանության համակարգում ազդանշեց անցում դեպի որակապես նոր պատկերացումների և գաղափարախոսության համադրույթ[9]:

Ավելին, ի տարբերություն Ֆ.Ռուզվելտի և Ռ.Նիքսոնի ժամանակաշրջանի, 2000-ական թթ. արտաքինքաղաքական գործոնները ակտիվորեն օգտագործվեցին միջկուսակցական պայքարում: Այսպես, 2004թ. նախագահական ընտրություններում Ջ.Բուշն ուղղակիորեն օգտագործեց ահաբեկչության սպառնալիքը իբրև փաստարկ ընդդեմ մրցակցի՝ հայտարարելով, թե դեմոկրատների հաղթանակը երկիրը կհասցնի աղետի: Փոխնախագահ Ռ.Չեյնին գնաց էլ ավելի հեռու՝ ակնարկելով, որ սխալ ընտրության դեպքում ԱՄՆ-ին կսպառնա մեկ այլ հարված: 2006թ., կանխազգալով միջանկյալ ընտրություններում (Կոնգրես) դեմոկրատների հաղթանակի բարձր հավանականությունը, Ջ.Բուշը հաստատեց իր նախկին մտահղացումները առ այն, որ դեմոկրատների հաղթանակը կնշանակի՝ «ահաբեկիչները հաղթեցին, իսկ Ամերիկան տանուլ տվեց»[10]:

Այն, որ կուսակցական պատկանելությունը այսուհետ որոշիչ դեր է խաղալու արտաքինքաղաքական հարցերում այս կամ այն դիրքորոշում ընդունելու կապակցությամբ, ակհնայտորեն երևաց իրաքյան պատերազմի օրինակի վրա: 2006թ. (Կոնգրեսի երկու պալատներում տեղերի մեծամասնությունը անցել էր դեմոկրատներին) կոնգրեսական քվեարկության ժամանակ 201 հանրապետականներից միայն 17-ը միացան դեմոկրատներին Ներկայացուցիչների պալատում՝ ընդդիմանալու ամերիկյան զորքերի թվաքանակի մեծացմանն Իրաքում: Մինչդեռ դեմոկրատների (երկու պալատներում) 95%-ը գրեթե միահամուռ կողմ քվեարկեց ԱՄՆ-ի զորախումբը Իրաքից դուրս բերելու ժամանակացույցը հաստատելու օգտին[11]:

[9] Ավելի մանրամասն, տես՝ А.Уткин, Месть за победу - новая война, М., Алгоритм 2005, стр.500-520.
[10] America's Angry Election, Economist, January 3, 2004, p.7.
[11] http://www.voteview.com

Բ. Օբամայի և Ջ.Մակքեյնի արտաքինքաղաքական կոմնորոշումներն ու մոտեցումները՝ Ռուսաստանի օրինակի վրա

Ընդհանուր առմամբ՝ 2008թ. նախագահական ընտրությունների մեկնարկը նույնպես աչքի ընկավ հանգուցային արտաքինքաղաքական հիմնահարցերի շուրջ թեկնածուների, որոշ իմաստով, բևեռային դիրքորոշումներով: Թեև սկզբնական շրջանում գլխավոր կուսակցական պարագլուխներն առանձնապես հակված չէին մանրամասնելու և գործնական քաղաքականության տերմիններով փաստարկելու իրենց մոտեցումները, այդուհանդերձ միջազգային թատերաբեմում ԱՄՆ-ի կողմից իրականացվելիք քաղաքականության հիմնական հայեցակետային շարժառիթները ուղղակիորեն բխում էին հանրապետական-դեմոկրատական տարաձայնությունների համադրույթից: Հասկանալի պատճառներով քաղաքական հակասությունների կիզակետում մենաշնորհային տեղ էր զբաղեցրել իրաքյան խնդիրը:

Փոխնախագահի դեմոկրատական թեկնածու Ջ.Բայդենը 2008թ. օգոստոսին Դենվերում կայացած հանդիպման ժամանակ նկատեց, որ «Բուշի վարչակազմը չկարողացավ պատշաճ ձևով արձագանքել այն կարևորագույն իրադարձություններին, որոնք որոշեցին 21-րդ դարի ընթացքը. Չինաստանի, Ռուսաստանի ու Հնդկաստանի մուտքը համաշխարհային քաղաքական թատերաբեմ, զանգվածային ոչնչացման զենքի տարածումը, էներգիայի բնական աղբյուրների ու խմելու ջրի պաշարների սակավացումը, կլիմայի փոփոխումը, Աֆղանստանի ճգնաժամը, Ֆունդամենտալիզմի վերադարձը Պակիստան…Վերջերս մենք ականատես եղանք, թե ինչպիսի հետևանքներ ունեցավ Ռուսաստանի կողմից ազատ և ժողովրդավարական Վրաստանին նետված մարտահրավերի արհամարհանքը: Ես և Բարաքը վերջ կդնենք այդ արհամարհանքին: Մենք կստիպենք Ռուսաստանին պատասխան տալ իր գործողությունների համար և մենք կօգնենք Վրաստանի ժողովրդին վերականգնվելու»:

Այդուհանդերձ, Բ.Օբամայի արտաքինքաղաքական օրակարգում Ռուսաստանի հետ կապված մարտահրավերների «փաթեթը» ավելի շատ «գործառութային» բնույթ է կրում: Քննադատաբար մոտենալով արդի ռուսաստանյան թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքականության ռազմավարական դրվագներին՝ դեմոկրատների՝ միջազգային օրակարգում Ռուսաստանի հետ փոխգործակցության ընդհանուր պարամետրերը «տարրալուծված» են ըստ գործառութային ոլորտների, որտեղ «Միացյալ Նահանգները վճռական է իր նպատակին հասնելու հարցում»: Այլ խոսքերով, դեմոկրատական թեկնածուի թիմը, որի անդամները, հաջողության դեպքում, կզբաղեցնեն գործադիր իշխանության հանգուցային պաշտոնները, ակնհայտորեն հակված չէ ամերիկյան ռազմավարությունը ՌԴ-ի հանդեպ «ածանցել»՝ առավել ևս պայմանավորել համընդհանուր դարձած հակառուսական դիսկուրսով:

Այսպես, նույնիսկ Հարավային Օսիայում (2008թ. օգոստոս) տեղի ունեցած իրադարձությունների Ֆոնին, Բ.Օբամայի նախընտրական թիմի անդամ, արտաքին քաղաքական հարցերով գլխավոր խորհրդական Ս.Ռայսը հաստատեց, որ դեմոկրատ

թեկնածուն լիովին բացառում է «Սառը պատերազմի» վերադարձը. «Օբաման հասկանում է, որ աշխարհը, որում այսօր մենք ապրում ենք, այն նույն աշխարհը չէ, որ գոյություն ուներ մեկ սերունդ առաջ: Եթե մենք շարունակենք հենվել 20-րդ դարի երկրորդ կեսի ռազմավարության վրա, ապա չենք կարողանա լուծել այն խնդիրները, որոնք ծառանում են մեր առջև 21-րդ դարում»[12]:

Թեև հակառուսաստանյան դիսկուրսը հարաբերականորեն կարելի է համարել գրեթե միակ խոշոր հիմնահարցը, որի շուրջ նկատելի են երկկուսակցական փոխհամաձայնության եզրեր ինչպես Կոնգրեսում, այնպես էլ նախագահական թեկնածուների միջավայրում, գործնական մոտեցումների մակարդակում տարբերություններն ակներև են: Նախնառաջ երկու թեկնածուների արտաքին քաղաքական օրակարգերը զանազանվում են գերակայությունների աստիճանակարգվածությամբ: Եթե Բ.Օբամայի համար ամերիկյան արտաքինքաղաքական «պրոբլեմային առաջնահերթությունները» գլխավորապես կենտրոնացած են որոշակի հիմնախնդիրների վրա, որոնք բխում են այս կամ այն երկրից կամ տարածաշրջանից, ապա հանրապետական թեկնածուի մոտեցումներն ուղղակի հասցեատերեր ունեն, որոնցից մեկն է, օրինակ, Ռուսաստանը:

Այս առումով, հաշվի առնելով Ռուսաստանի հետ անմիջականորեն կամ միջնորդավորված ձևով կապված «խնդրահարույց փաթեթի» ծավալները, Մոսկվայի հետ հարաբերությունները գերակա բնույթ կստանան հանրապետական վարչակազմի օրոք:

Այսպես, Ջ.ՄակՔեյնի «նորարարական» առաջնահերթությունների շարքում է այսպես կոչված «Ժողովրդավարությունների լիգայի» ստեղծումը, որտեղ Ռուսաստանին ամենևին էլ տեղ չի վերապահվի: Ավելին, նոր հանրապետական վարչակազմի ընտրման դեպքում հնարավոր կոշտ քայլերի շարքում չի բացառվում նաև ամերիկյան կողմի կտրուկ ակտիվացումը՝ ՄԱԿ-ի ԱԽ-ում ռուսաստանյան վետոյի իրավունքից «ձերբազատվելու» ուղղությամբ, վերջինիս վտարումը «Մեծ ութնյակից» և այլն[13]:

Ճիշտ է, լավ ըմբռնելով ներկա վարչակազմի հեղինակության անկման փաստը, վերջինի կողմից որդեգրված կարծր կողմնորոշումների անհեռանկարությունը, ինչպես նաև՝ ռուս-ամերիկյան հակասությունների շուրջ բարդացող ու ոչ միանշանակ միջազգային համատեքստը՝ որոշակի ճշգրտումներ մտցվեցին նաև հանրապետականների մոտեցումներում: Այսպես, սեպտեմբերի սկզբին Ջ.Մակքեյնը, վերադառնալով Մոսկվայի հասցեին ուղղված քննադատությանը, որը «ձեռք է քաշել դեմոկրատական կատարելատիպերից և պարտականություններից, որոնք բխում են իշխանությունից, ներխուժեց փոքր անկախ հարևան պետություն, որպեսզի սաստկացնի իր վերահսկողությունը նավթի համաշխարհային պաշարների նկատմամբ», այնուամենայնիվ խոստացավ, թե իր ընտրության դեպքում «սառը պատերազմը չի

[12] Иван Баранов, Обама и Байден о России, свободе и лучших временах, *Интерфакс,* 29.08.2008.
[13] В.Скосырев, Месть Маккейна, Независимая газета, 29.07.2008.

վերադառնա», իսկ Ռուսաստանի հետ հնարավոր է նույնիսկ լավ հարաբերությունների հաստատում[14]:

Սակայն օրախնդիր հիմնահարցերի լուծման սխեմաները, ի տարբերություն նախընտրական ճարտասանության, դժվար թե գործնականում արագ փոփոխման ենթարկվեն: Օրինակ, թե՛ դեմոկրատների, թե՛ հանրապետականների գերկարևոր խնդիրներից մեկն է շարունակում մնալ միջուկային անվտանգության ապահովման հարցը, որը անհնարին է լուծել առանց ՌԴ-ի մասնակցության: Դատելով կուսակցական էլիտաների ներկայացուցիչների առանձին հայտարարություններից և մեկնաբանություններից՝ ռուս-ամերիկյան միջուկային փոխգործակցության modus operandi-ն կարող է նկատելիորեն տարբերվել:

Այսպես, հիշյալ խնդրի շուրջ հանրապետականների մոտեցումները ակնհայտորեն շարունակում են պահպանել սառըպատերազմյան կարծրատիպերի տրամաբանությունը, որոնք թեև հենվում են էմպիրիկ փորձի վրա, սակայն արդի իրավիճակում անիրականանալի են թվում: Ջ.ՄակՔեյնը սկզբունքորեն կողմ է արտահայտվում միջուկային վերահսկման և չտարածման ռեժիմի հարատևության, ինչպես նաև բազմակողմանի ջանքերի գործադրման անհրաժեշտության օգտին: Ի տարբերություն Ջ.Բուշի վարչակազմի, որը միջուկային բնագավառում գործողության ընդունեց միակողմանի լուծումների մոդելը, հանրապետական թեկնածուն հայտարարեց «իրավական շրջանակներում հավասարակշռության պահպանման անհրաժեշտության» մասին, ինչը պահանջում է վերադարձ բազմակողմանի ձևաչափերին («ԱՄՆ-ը՝ իր ներկայիս զորեղությամբ հանդերձ, չի կարող կանգնեցնել միջուկային տարածումը միակողմանի գործունեությամբ…»):

Դրա հետ մեկտեղ, ելնելով այլ կարգի արժեքային սկզբունքներից, որոնց շուրջ Ռուսաստանի հետ «առևտուր» անելը տեղին չէ, Ջ.ՄակՔեյնը շարունակում է պնդել ՌԴ-ին «ժողովրդավարական հանրության» շարքերից դուրս հանելու պարտադիր լինելու գաղափարի վրա՝ ակնարկելով նաև ՄԱԿ-ի ԱԽ-ում Մոսկվայի վետոյի իրավունքից ինչ-որ կերպ փաստացիորեն ձերբազատվելու կարևորությունը և այլն[15]: Այլ խոսքերով, ձգտելով շահել քաղաքական կենտրոնի համակրանքը և փորձելով հանդես գալ պրագմատիկ դիրքերից, հանրապետական թեկնածուն իրականում ելնում է հին սառըպատերազմյան մոդելի վերակենդանացման հնարավորությունից. երկկողմանի հարաբերությունների ռազմավարական համադրույթից դուրս բերել հետաքրքրություն ներկայացնող առանձին ասպեկտներ և փոխշահավետ համաձայնության գալ մրցակցի կամ գործընկերոջ հետ: Պատմական հեռանկարում՝ 1960-80-ական թթ. ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը իրոք առարկայապես փոխգործակցում էին սպառազինությունների (միջուկային և սովորական) վերահսկման գործում՝ անկախ աշխարհաքաղաքական և գաղափարական մրցակցության ինտենսիվության աստիճանից:

[14] Дж.Маккейн: Лидеры РФ отреклись от демократических идеалов, РБК, 5.09.2008
[15] Безъядерные мечты Маккейна, Ф.Лукьянов, www.globalaffairs.ru, 29.05.2008.

Ի տարբերություն հանրապետական թեկնածուի՝ Բ.Օբամայի թիմի կեցվածքը նվազ «օրթոդոքսալ» է. «Թեև մենք չպետք է խուսափենք Ռուսաստանում էլ ավելի մեծ չափով ժողովրդավարության և պատասխանատվության առաջխաղացումից, անհրաժեշտ է այդ երկրի հետ համատեղ աշխատել այն ոլորտներում, որտեղ ընդհանուր շահեր են առկա՝ նախնառաջ ապահովելու միջուկային զենքի և միջուկային նյութերի ապահովությունը: Մենք նույնպես պետք է աշխատենք Ռուսաստանի հետ, որպեսզի նվազեցնենք և վերափոխենք հնացած սառըպատերազմյան կարծրատիպերը այս բնագավառում, հեռանանք միջուկային զենքի շեշտադրումից: Ամերիկան չպետք է շտապի նոր սերնդի միջուկային մարտագլխիկների արտադրության հարցում: Եվ մենք պետք է օգտագործենք ժամանակակից տեխնոլոգիական կարողությունները՝ կառուցելու երկկուսակցական փոխհամաձայնություն՝ Միջուկային փորձարկումների համընդհանուր արգելման մասին համաձայնագիրը վավերացնելու համար: Այս ամենին հնրավոր է հասնել՝ միաժամանակ պահպանելով վստահելի միջուկային զսպումը»[16]:

Մոսկվայի հանդեպ նվազ «մարտնչող» դիրք ընդունելու մասին է փաստում նաև (թեև անուղղակի ձևով) Բ.Օբամայի մտադրությունը հասնելու նրան, որ ՆԱՏՕ-ի դաշնակիցները «ավելի շատ ներդրում ունենան Դաշինքի զինված ուժերում և համատեղ անվտանգության գործողություններում», մինչդեռ Ջ.ՄակՔեյնը հակված է մեծացնելու ԱՄՆ-ի զինված ուժերը ներկայիս 750 հազ.-ից մինչև 900 հազ.: Ավելին, ըստ հանրապետական թեկնածուի՝ կստեղծվի առանձին բանակային մի ստորաբաժանում (20 հազ.), որի նպատակը կդառնա «աջակցություն ցուցաբերել արտասահմանում գտնվող կանոնավոր բանակային միավորներին»[17]:

Ճիշտ է, Բ.Օբաման ևս նախատեսում է ավելացնել ցամաքային ուժերը 65 հազ. զինծառայողով, սակայն՝ ընդունելով պաշտպանական բավարարության ճկուն համակարգ:

Եթե դեմոկրատական թիմը անդրատլանտյան համագործակցության աշխուժացումն ու արդիականացումը կապում է զուտ ներքին ինստիտուցիոնալ վերաբաշխումների սխեմաների իրականացման հետ, ապա Ջ.ՄակՔեյնի շուրջ համախմբված իսթեբլիշմենտի ներկայացուցիչները միտված են արտաքին մրցակիցների հետ որոշակի «հակա-հավասարակշիռների» միջոցով խթանել դաշնակցային հարաբերությունները Եվրոպայի հետ: Ընդ որում, նման արտաքին հակազդեցության կենտրոնի դերակատարությունը, ըստ Ջ.ՄակՔեյնի, վերապահվում է Ռուսաստանին, որը «պետք է դուրս հանվի Մեծ ութնյակից»[18]:

Ակնհայտ է, որ անկախ նրանից, թե որ կուսակցության թեկնածուն կհաղթի նոյեմբերյան ընտրություններում, իրական քաղաքականության ուրվագծերը կորոշվեն «տասնամյակների ընթացքում հղկված բնականորեն ինստիտուցիոնալիզացված

[16] B.Obama, Renewing American Leadership, Foreign Affairs, July/Aug. 2007.
[17] J.McCain, An Enduring Peace Built on Freedom, Foreign Affairs, Nov./Dec. 2007.
[18] Նույն տեղում:

արտաքին քաղաքականության գործընթացի» շրջանակներում, որտեղ նախագահի կողմից կտրուկ շրջադարձային փոփոխության հավանականությունը ցածր է նույնիսկ միջկուսակցական առարկայական տարաձայնությունների համատեքստում[19]: Այդ իրողության ընկալման մասին են փաստում նաև թեկնածուների մոտեցումները իրաքյան պատերազմին առնչվող խնդիրների պարագայում. չնայած նրանց դիրքորոշումների պատճառականության և հիմնավորման ձևերի տարբերություններին՝ երկուստեք ընդունվում է, որ ամերիկյան զորքերը վաղ թե ուշ պետք է դուրս բերվեն այդ երկրից (ժամկետների շուրջ տարաձայնությունները պահպանվում են):

Մյուս կողմից, ամերիկյան քաղաքական վերնախավում գնալով խորանում է այն համոզմունքը, որ ԱՄՆ-ի ռուսաստանյան քաղաքականության արդյունքները (թե՛ Բ.Քլինթոնի, և թե՛ Ջ.Բուշի վարչակազմերի օրոք) բավականաչափ «անորոշ» ժառանգություն են թողնելու ամերիկյան նոր նախագահին: Դեռևս մինչ ռուս-վրացական վերջին ճգնաժամը և ՌԴ-Արևմուտք քաղաքական հակասությունների բյուրեղացումը՝ ամերիկյան «ռեալիստները» մատնանշում էին մի քանի պարզ իրողություններ, որոնք երկարաժամկետ-կառուցվածքային ներազդեցություն կունենան ՌԴ-ի նկատմամբ ամերիկյան ուղեգծի վերանայման վրա. նախ՝ Ռուսաստանի ինտեգրումը եվրո-ատլանտյան ինստիտուտներին քիչ հավանական գնահատվեց, երկրորդը՝ Վ.Պուտինի և նրա կողմից ընտրված ներքին ու արտաքին քաղաքականության (ներռուսաստանյան) աջակցությունը լայնածավալ բնույթ է կրում, ինչը դժվար թե հաջողվի հեշտությամբ սասանել արտաքին լծակների օգտագործմամբ, երրորդը՝ Միացյալ Նահանգների կողմից Մոսկվայի վրա բանեցվող ճնշման միջոցները սակավ են, չորրորդը՝ մի շարք հանգուցային բնագավառներում շահերի համընկման դաշտն այդուհանդերձ թույլ չի տալիս պնդելու, որ երկու երկրների միջև իրական «սելեկտիվ համագործակցության» հիմքեր են առկա[20]:

Այս համատեքստում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրարամերժ համագործակցություն-հակազդեցություն ռուս-ամերիկյան ապագա հարաբերությունների սխեման չի բացառում որակապես նոր նախաձեռնությունների և ոչ ստանդարտ քայլերի հավանականությունը, ամերիկյան քաղաքական դասը, ըստ ամենայնի, Ռուսաստանի նկատմամբ իր ռազմավարությունը մշակելիս կհայտնվի երկու ընդհանրական բնույթ կրող մոդելների ընտրության առջև:

Դրանցից առաջինը ենթադրում է հարաբերականորեն կարծր, բայց տարիների ընթացքում փորձարկված հարաբերությունների «ձևաչափ»: Փոխհարաբերությունների քաղաքական չափումն այդ տարբերակում կկրի մրցակցային (նույնիսկ հակամարտող) բովանդակություն, սակայն համագործակցությունը օրախնդիր հիմնահարցերի շուրջ կարող է ստանալ առարկայական և գործնական բնույթ: Նման կարգի

[19] G.Friedman, Foreign Policy and the President's Irrelevance, Stratfor, 5.02.2008.
[20] N.Gvosdev, Parting with Illusions: Developing a Realistic Approach to Relations with Russia, Policy Analysis, 28.02.2008.

«քաղաքականացված» համադրույթի օրինակ կարող է ծառայել 2008թ. հունիսին Ռուսաստանում ԱՄՆ-ի նոր դեսպանի թեկնածու Ջ.Բեյրլիի ելույթը ամերիկյան Սենատում, որտեղ վերջինս հանդես եկավ Մոսկվայի հասցեին ուղղված արդեն հերթապահ դարձած քննադատությամբ: Սակայն դեսպանի ելույթն ուշագրավ էր Ռուսաստանի և Խորհրդային Միության միջև մշտական համեմատությունների և զուգահեռների անցկացմամբ՝ կարծես ամերիկյան կողմի համար խոսքը գնում է հստակ շարունակականության մասին: Ինչպես նկատեց դեսպանը, թեև վերջին 20 տարիների ընթացքում էական փոփոխություններ են տեղի ունեցել աշխարհում, սակայն երկկողմանի հարաբերություններում «բոլոր կարևոր տարրերը մնում են նույնը»[21]: Այս կարգի նկատառումները գերակա են հանրապետականների շրջանում, որոնք, այդունադերձ, չեն հրաժարվի «սելեկտիվ համագործակցության» գաղափարից՝ փորձելով խաղարկել մտրակի և բլիթի մարտավարությունը Մոսկվայի հետ հարաբերություններում:

«Ավանդական» այդ տարբերակին կարող են հակադարձվել դեմոկրատական կուսակցության պլատֆորմին («Change») ձայնակցող համեմատաբար ավելի ստեղծագործական մոտեցումները: Հայեցակարգային առումով ռուս-ամերիկյան հարաբերություններին նոր ազդակներ և նոր մեկնարկ հաղորդելու միտումն անշուշտ շատ ավելի մեծ աշխատանք կպահանջի: Այդուհանդերձ, Բ.Օբամայի կողմից սատարվող կառուցվածքային փոփոխությունների իրականացումը տնտեսական և սոցիալական ոլորտներում կարող է նոր տարրեր և փոփոխականներ ներմուծել ինչպես ամերիկյան արտաքին քաղաքականության մեջ, այնպես էլ երկու երկրների հարաբերություններում: Միայն արտաքին տնտեսական քաղաքականության մեջ շեշտադրումների տեղաշարժը նավթարդյունաբերական համալիրից հօգուտ դեմոկրատների կողմից ավանդաբար հովհանավորվող բարձր տեխնոլոգիաների և արդիական արդյունաբերության սեկտորներ կարող է էապես արդրադառնալ երկկողմ օրակարգի վրա՝ զգալիորեն մեղմելով այն կոշտ մրցակցային սխեմաները, որոնք արմատացել են ՌԴ-ԱՄՆ փոխհարաբերություններում եվրասիական գործընթացները ուղղորդելու պայքարում: Հավանաբար դեմոկրատական վարչակազմը կձգտի առանձնացնել Ռուսաստանի հետ իրական համագործակցության չափումներ (ի տարբերություն հանրապետականների, որոնք հակված են դուրս բերել համագործակցության առանձին, «տեխնիկական» բնույթ կրող հատվածներ), որոնք որոշակիորեն կկրեն համապարփակ բնույթ՝ ուժեղացնելով ռուս-ամերիկյան փոխգործակցության ինստիտուցիոնալ դաշտը:

[21] А.Терехов, Посол по глубоким разногласиям, Независимая газета, 23.06.2008.